





կրում, որ Տիրնովոյ սահմանադրութիւնը կարող չէ չափազանց ընդարձակ լինել բայց, եթէ բոլորացոյնները խելացի կօտակեն նրանից, ոռւսաց կառավարութիւնը չի ցաւի այդ սահմանադրութիւնը վերականգնելու մասին: Զօրքերի վերաբերեալ հարցը լինելէ՝ դժուար է, բայց կծուող է լուծվել, որովհետեւ երկու կողմերն էլ համաձայն են, որ պատերազմական միջոցները պէտք է ոռւս լինի: Բալաբանով մեծ օգուտներն է սպասում բոլորական իշխանի տնտեսական խօսակցութիւններից Ֆելիզեր-ադիւտանտ Կաուլբարսի հետ: Վիէնայի մէջ Բալաբանով գտաւ մի և նոյն հայացքը ինչ որ և Ս. Պետերբուրգում: Այստեղ խօստովանում են, որ Բոլշարիան պէտք է երախտապարտ լինի Ռուսաստանին:

ՅԵՐԼՈՒՆ, 31 հոկտեմբերի: Երեկ երկուշեան հասաւ այստեղ Մեծ Խշիան Վլադիմիր Ալեքսանդրովիչ իր ամուսնի հետ: Կայարանի վրա Նորին Բարձրութեանը ընդունելին գերմանական թաղաժառանգը և ոռւսաց դեսպանութիւնը: Նոցա Բարձրութիւնները իջեանեցին ոռւսաց դեսպանատունը, որտեղ նրանց այցելեց կայսրը:

ՍՕՅԻՍ, 31 հոկտեմբերի: Ֆելիզեր-ադիւտանտ Կաուլբարս ընդունկեցաւ իշխանից մի տեսակցութեան ժամանակ, որ չորս ժամ տեւեց: Պաշտօնական լրագիրը հաղորդում է, որ Սերբիայի մէջ ապստամբութիւնը ընդարձակվում է: Ալեքսինացի և Կնեաժեկացի շրջանները ապստամբվել են: Կնեաժեկացի մէջ ապստամբները մի բատարէյ գրաւեցին: Զայչարի մէջ քաղաքային և գիտւորական ապստամբները ևս

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 31 հոկտեմբերի։ Արտաքին գործերի մինիստրը արտասահման ուղևորվեցաւ բացառապէս տնային գործերի պատճառով։ Մինիստրութիւնը ժամանակուորապէս կառավարում է մինիստրի օգնական Վլանգալի։

ՄՕԳԻԼԵՕՎ-ՊՕԳՈՒՍԿԻ, 31 հոկտեմբերի։ Բեսարաբրայի զինեվաճառները մտադիր են 1884 թուականին Բեսարաբրայի մէջ՝ տեղական զինու՝ աշխարհահանդէս կազմել։

ՁԻՊՕՎԷՅ, 31 հոկտեմբերի։ Եղանակը անձրեւային և տաք է 8°: Զուրը Վլադայի մէջ զրօց 47 վերջով բարձր է։

ՍԱՄԱՐԱ, 31 հոկտեմբերի։ Եղանակը տաք է, սառեւերի տակ 6°:

ՐԻԳԱ, 31 հոկտեմբերի։ Լիֆլանդական ազնուականութիւնը որոշեց՝ ինչդեր կառավարութեւնը՝ թողլուութիւն՝ նուիրատուութիւններ հաւաքել Լիւտերին արձան կանգնելու համար։

ԼՕՆԴՈՆ, 31 հոկտեմբերի։ Մարկիզ Զէնգ ասաց „Standard“ լրագրի թղթակցին, որ Ֆրանսիայի հետ բանակցութիւնները ընդհատված կը լինեն մինչև այն ժամանակ, երբ Ֆրանսիան կը պատասխանէ Չինաստանի վերջին շրջաբերականին։ Զէնգ պատերազմը հաւանական է համարում, եթէ Ֆրանսիայիները յարձակնեն Բաբի վրայ։

